ՈՐՈՇՈՒՄ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտական խորհրդի 2015թ. օգոստոսի 27-ի նիստի

(արձանագրություն N1)

Լսելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում դասավանդման որակի հետագա բարելավման մասին կրթական բարեփոխումների և որակի վարչության պետ Մկրտիչ Ավագյանի հաղորդումը՝

Գիտական խորհուրդը որոշում է՝

1. ՀՊՄՀ-ում դասավանդման որակի հետագա բարելավման մասին հաղորդումն ընդունել ի ղեկավարում.
2. Արձանագրել դասավանդման որակի հետագա բարելավման գործընթացի կարևորությունը ՀՊՄՀ կրթական բարեփոխումների շրջանակներում և համապատասխանությունը համալսարանի ռազմավարական գերակայություններին,
3. Համալսարանի ուսումնական բոլոր ստորաբաժանումներում
    - քննարկել դասավանդման որակի հետագա բարելավման և դասավանդման արդյունավետության բարձրացման խնդիրները և նախանշել կրթական զարգացումների պահանջներին համահունչ կոնկրետ միջոցառումներ / սեպտեմբեր 2015, ՀՊՄՀ ամբիոններ,ֆակուլտետներ/,
    - 2015-16 ուսումնական տարվա սեպտեմբերի 21-ից ՀՊՄՀ բակալավրական բոլոր կրթական ծրագրերի 1-ին կուրսեցիների ուսուցումը կազմակերպել և իրականացնել առարկայական ուսումնամեթոդական փաթեթների / համառոտ բացատրագիր, դասախոսությունների փաթեթ, տեսական և գործնական պարապմունքների նյութեր, հարցեր ինքնստուգման համար, ինքնուրույն հետազոտական աշխատանքների և դրանց գնահատման չափանիշներ, լաբորատոր և արտալսարանային աշխատանքների կատարման մանրամասներ/,
    - 2015-16 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակից ՀՊՄՀ բոլոր կրթական ծրագրերի բակալավր 2-4-րդ կուրսերի ուսանողների ուսուցումը կազմակերպել և իրականացնել առարկայական ուսումնամեթոդական փաթեթների կիրառմամբ,
4. Հանձնարարել Համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը և կրթական բարեփոխումների և որակի վարչությանը
    - եռօրյա ժամկետում բոլոր ուսումնական ստորաբաժանումներին տրամադրել առարկայական ուսումնամեթոդական փաթեթների օրինակելի ձևանմուշը,
    - մինչև ս/թ սեպտեմբերի 21-ը ստեղծել ուսանողի ուղեցույց, շտեմարաններից օգտվելու պայմանների ու հնարավորությունների մանրամասն նկարագրությամբ, ապահովել դրանց հասանելիությունը ուսանողներին,

5. Հանձնարարել Համալսարանի ամբիոններին կազմակերպել և անցկացնել պարբերական ամբիոնի նիստեր
    - մինչև 2015 թվականի սեպտեմբերի 21-ը պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից մշակված բակալավր 1-ին կուրսերի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների հաստատման նպատակով, մինչև 2015 թվականի դեկտեմբեր բակալավր 2-4-րդ կուրսերի առարկայական ուսումնամեթոդական փաթեթների հաստատման նպատակով.
6. Հանձնարարել Համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին՝
    - ստեղծել առարկայական ուսումնամեթոդական փաթեթների էլեկտրոնային բազա, ինչպես նաև ուսանող-դասախոս մասնագիտական հաղորդակցման էլեկտրոնային հարթակ դասընթացի շուրջ ինտերակտիվ շփումն ապահովելու նպատակով,
    - ստեղծել ուսանողների տվյալների էլեկտրոնային բազա, որի շնորհիվ յուրաքանչյուր ուսանող կարող է օգտվել իր մասնագիտության գծով անհրաժեշտ սեկտորից,
    - ապահովել ուսումնամեթոդական էլեկտրոնային բազայի կապը համալսարանի այլ էլեկտրոնային ռեսուրսների հետ,
7. Հանձնարարել համալսարանի ֆակուլտետներին և նրանց խորհուրդներին՝
    - պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր հաստիքների մրցույթների անցկացման ընթացքում որպես մրցութային պահանջ, առանձնակի կարևորություն տալ թեկնածուի գործընթացին ներգրավվածությանը,
    - պարբերաբար անդրադառնալ դասավանդման նոր համակարգի ներդրման խնդիրներին ֆակուլտետի խորհրդի նիստերում,
8. Սույն գործընթացի հսկողության իրականացումը հանձնարարել ՀՊՄՀ ուսումնամեթոդական և կրթական բարեփոխումների և որակի վարչություններին:

Ռեկտոր՝ **Ռուբեն Միրզախանյան**